շինուելու է մինչ 'ի Հայր Աբրահամ։ Յուսով եմք Պսեմ. Կառավարչին անդուլ աշխատութեանց արդեամբը այս դիւրութիւնն ալ վայելելու բարեբախտութիւն ունենամք։

— Հանդիսիս Պեծ. Խաժանորդք կը յիշեն Մարգուանցի Յարութիւն վարդապետի գժբաղդ արկածը, որ մինչ ցարդ 'ի վանս Ռէմլէու կը կենար իւր վայ դրուած պարարքը կատարելով։

Այս անգամ միաբանութիւնս յատուկ խնդրագրով միջնորդեց առ Սմեն Արքաբան Հայրն բաւ հատարել նորա վիշտը՝ և հայրապետական իշխանութիւնը ներել նմա, և ընդունել դարձեալ 'ի շարս հոգեւորականութեան։ Խաբեբեանամ Արքաբան Հայրը 'ի շնորհս խնդրանաց Ռէմլէու բերել տալով Ռէմլէէն, ու պատպանիչ և իրատներ խոստելով ընդունեց հայրական սիրով 'ի դաստ միաբանից։

— Յառաջուց անտի կառավարութեան անհոգութեան պատճառաւ քաղաքիս և շրջակայից ցորեանը հեռու երկիրներ կըտանէին, որով գինը օր ըստ օրէ կը բարձրանայր և բնակիչք բաւական նեղութիւն կը կրէին։ Պսեմ. Նազիֆ Փաշան՝ որուն արդարաւէր գործոց արդիւնքը ամէն տեղ ուսեալ ունեցած եմք Հանդիսիս միջոցաւորութեամբ հրատարակել այս անպատեհ անկարգութեան առաջքն առնելու նպատակաւ, սաստիկ հրաման հանեց այսուհետեւ ցորեան դուրս չի հանել. հետեւաբար առատանալով օր քան զօր գինը կըջափաւորուի, և այժմ շուկան բաւական ցորեան կը գտնուի։

— Աւստրիոյ Պեծ. Հիւպատոս Կոմս Ռապոկա օգափոխուեր հատարէրուաց զէմ մի ժամ հեռու որ Լոլլա անուանեալ տեղը տուն մի վարձած ըլլալով շաբթուս մէջ գիշերը ժամ երեք քառնի հատ Աբրաբայիք տունը մտնելով ինչ որ կը գտանեն ներքին յարկը կոզողտելով կը տանին։

Կոմս Ռապոկա թէ և ինքը արթուն և կրգայ վարի շշնկոցը, բայց սպասաւորները կարծելով անհոգ կըկենայ. իսկ սպասաւորք ախոռը կը գտնուին։

Ադաւտեան խմբագրելով անմիջապէս կառավարութեան ըսի կը տրուի։ Պսեմ. Նազիֆ Փաշայի արդիւնն հսկողութեամբ քիչ օրէն ամբողջ գտնուեցան ինչքերը և տաղակները շրջայակայ բանտարիուեցան։

— Ինչպէս անցեալ թուով ծանուցած եմք Կարնոյ Դեր. Ադաւորդ Յարութի Աղբ Եպիսկոպոսի վիհապետեան տեղեաց յուխտ և երկրպագութիւն գալը։ Նորին սրբազնութիւնը իւր ջերմ փափագը լրացնելով տմոյա վերջերը ճանապարհորդեց 'ի Կ. Պոլիս և անտի իւրսեփական վիճակը որոյ վերադարձին անհամբեր ոգւով կրսպասեն Նորին Սրբազնութեան աջորդ խնամոցը յանձնուած բարեպաշտ ժողովրդք։ Նորին Սրբազնութեան Ս. Քաղաքս անցուցած տուղ միջոցին ըստ արժանւոյն հիւրասիրութիւն եղաւ Սմեն. Սրբազան Հայր կոչմանէ և միաբանական ուխտէս։ Խորին ճանապարհ մաղթելով Նորին Սրբազնութեան կը խնդրեմք անմոռաց ունիլ իւր սրտին մէջ սրբազան վայրոց սէրը։ Նորին Սրբազնութեան հետ առաջեկցաւ և Աբժ. Աղէքսան վարդապետն Ալենճեան՝ որ ուրբ Օ. ատիէ 'ի վեր ատա կը գտնուէր։

ԸՕԴԵՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Դպրոցի հիմնական կանոններէն մէկն է ամեն ջանք ի գործ դնել եւ աշակերտ մը փոխանակ արձակելու՝ յուղղութիւն տալ։ Այս կանոնէն

թարգմանութիւն են այն աշակերտները, որոնք երկար յորդորանաց եւ խրատուց չանսալով և մտաւորապես ապարդիւնք՝ ջանասիրելով՝ ինքնին կը հանանին ելլելու, որով դպրոցի սեպհական թիւնն իսպառ անհետացելի կը մնայ հասարակութեան առջեւ։

Դպրոցիս աշակերտներէն մէկը Աբրահամ Տէր Պարդանեան Տուժիկցի, իւր ընկերակցաց մէջ միշտ յետապէմ գտնուելով և քանի մը ուսմունքներ (գծագրութիւն, գալիլիերէն, տաճկերէն) սիսելով և թողլով՝ վերջին ժամանակս պարզապէս յայտնեց, որ աւելի կը փափաքի արձակուիլ եւ իւր հայրենիքը երթալ՝ քան թէ ուսանիլ։ Դպրոցի սեպհականութիւնը քանի մը անգամ յորդորներ կարդաց յիշեալ աշակերտին իւր վնասակար գիտաւորութենէն յետ կենալ և իւր դասերը շարունակել, բայց ապդեցութիւն մը չեղաւ անոր ընթացից վրայ. ուստի որոշուեցաւ որ իւր հայրենիքը ղրկուի և ծնողացը յանձնուի, և այս փոքրիկ յայտարարութիւնը հրատարակուի օրագրի միջոցաւ, որպէս զի չկարծուի թէ նոյն աշակերտի արձակման պատճառն դպրոցի սեպհականութիւնն է։

Մասիս պատուական Լրագրի Մեծ. խմբագրին ուղղուած և Օրամերերի 209, 210, 211, 212, և 213 թիւերուն մէջ տպագրուած երկար և տակաւին մէջ շարունակելի մի ընդդիմախօսութիւն կը կարդանք, իբր ի պատասխանի Սիօնի 5դ ամսաթերթի մէջ հրատարակուած Տ-ՐԷԷ-ՐԻՆ կրօնական Դ-ՐԻԵԱՆ և Դ-ՐԷՊ-ՐԻԵԱՆ յօդուածոյն։

Թէպէտ և շատ փափաքելի էր մեզ շատով մի ըղձամիտ Հրատարակել յիշեալ ընդդիմախօսական պատասխանոյն դէմ, սակայն Սիօնի ներկայ ամսաթերթոյն տպագրութիւնը արդէն լրացած լինելով և Մասիս օրաթերթի ամբողջ թիւերը տակաւին մեր ձեռքը հասած չլինելով, ստիպուած ենք առաջիկայ ամսոյն թողուլ։

Բա այժմ այսքանը միայն կ'ասենք, որ աւելի բարեբաղդ պիտի համարէինք զմեզ եթէ Սիօնի յօդուածոյն դէմ եղած ընդդիմախօսութեան մէջ ընդարձակ հմտութիւն նշմարէինք և ոչ թէ սահմանափակ տեսութիւն, բաւականաբանութիւն, հակասականութիւնք և յաճախակի փոխուստ ի բան խնդրոյն, որոց համար դժբաղդաբար պիտի ստիպուինք ոչ թէ ուղղակի Հերետիկ գրել, այլ և ընդ նմին քրիստոնէութեան, եկեղեցական պատմութեան եւ ապդանութեան նկատմամբ՝ նոր ի նորոյ այլ բեռն դատապարտ մեր կարեցութեան արժանի ընդդիմախօսին։

ՆՈՐԱՏԻՊ ՍԱՂՄՈՍ

Ստուգաբանչն գրոց թէ հին և թէ նոր կտակարանաց տպագրութիւնը երկու հարիւր տարիէն ի վեր զանազան տպարանների եւ զանազան քաղաքաց մէջ ի լոյս ընծայուած են, մինչեւ վարդապետէն սկսեալ մինչև ցոյսօր։ Այսն վարդապետն առաջինն եղաւ որ Զմիւռնիոյ քաղաքին մէջ հրատարակեց Աստուածաշունչը 1666 ին, որ նոյն դարուն նկատմամբ՝ թէպէտ և մեծ ու նշանաւոր ծառայութիւն մի ըրած կը համարուի բարեպաշտ ժողովրդոց կրօնասէր եւ աղքատասէր ոգւոյն, այսու ամենայնիւ առանց նշանակութեան չկրնար երբէք անցնիլ իւր համարձակութիւնը՝ որով մեր նախնեաց թարգմանութեան մէջ ձեռներեց գտնուելոյս զանազան փոփոխութիւններուն ու յաւելուածնե-